ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 115-Ա
« 28 » ԱՊՐԻԼ 2025Թ

ՀԱՅԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՕՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 16-րդ հոդվածի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարզի բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման ապահովման, ֆիզիկական պատրաստականության մակարդակի, աշխատունակության բարձրացման, ինչպես նաև ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն երիտասարդ սերնդի ձևավորմանը խթանելու նպատակով 2025 թվականի մայիսի 7-ը հայտարարել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր:

2. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություններին՝ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օրվա պատշաճ անցկացումը:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր